Հավելված N 525
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ. հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) միջազգային համագործակցության վարչության (այսուհետ՝ Վարչություն) արտահանման խթանման բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (այսուհետ՝ Գլխավոր մասնագետ) (ծածկագիրը՝ 23-32.23-Մ2-5)

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս գլխավոր մասնագետը կամ Բաժնի ավագ մասնագետը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. իրականացնում է արտահանման զարգացման քաղաքականության մշակման հետ կապված աշխատանքները,
2. իրականացնում է արտահանման խթանման ոլորտին առնչող իրավական ակտերի մշակման, հաշվի առնելով ոլորտային առանձնահատկությունները՝ արտահանման խոչընդոտների վերհանման և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացնելու հետ կապված աշխատանքները,
3. իրականացնում է արտահանման խթանման ծրագրերի մշակման և իրականացման հետ կապված աշխատաները,
4. իրականացնում է արտաքին շուկաների ուսումնասիրման հետ կապված աշխատանքները,
5. իրականացնում է արտաքին շուկաներում հայրենական արտադրանքի և ծառայությունների մրցունակության բարձրացմանն ուղղված աշխատանքները,
6. իրականացնում է հայրենական արտադրողների համար արտաքին շուկաների հասանելիության, ինչպես նաև արտահանման խթանման վերաբերյալ

առաջարկություններ ներկայացնելու հետ կապված աշխատանքներ,

7. իրականացնում է արտահանման աջակցման քաղաքականության օրենսդրական նախաձեռնությունների ներկայացման հետ կապված աշխատանքներ,

8. իրականացնում է բեռնափոխադրումների և այլ լոգիստիկ միջոցների բարելավմանն ուղղված առաջարկությունների մշակման հետ կապված աշխատանքները,

9. իրականացնում է գործարար համաժողովների, ցուցահանդեսների և տոնավաճառների ներուժի օգտագործման՝ պետական և գործարար հատվածի մասնակցության, գործարար կապերի ձևավորմանն աջակցելու հետ կապված աշխատանքները:

Իրավունքները՝

- ստանալ շահագրգիռ մարմիններից և կազմակերպություններից արտահանման խթանման ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մասնագիտական կարծիքներ, առաջարկություններ և եզրակացություններ,
- ստանալ շահագրգիռ մարմիններից և կազմակերպություններից արտաքին շուկաներում հայրենական արտադրանքի և ծառայությունների մրցունակության բարձրացման վերաբերյալ մասնագիտական կարծիքներ և հիմնավորումներ,
- ընդգրկվել բեռնափոխադրումների և այլ լոգիստիկ միջոցների բարելավմանն վերաբերյալ շահագրգիռ մարմիններից և կազմակերպությունների հետ անցկացվող աշխատանքային քննարկումներում,
- ստանալ արտահանման աջակցման քաղաքականության օրենսդրական նախաձեռնությունների մշակման հետ կապված մասնագիտական կարծիքներ և եզրակացություններ,
- մասնակցել արտահանման զարգացման և աջակցման քաղաքականության առանձին ուղղությունների մշակման վերաբերյալ շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների հետ անցկացվող աշխատանքային քննարկումներին,
- մասնակցել գործարար համաժողովների, ցուցահանդեսների և տոնավաճառների ներուժի օգտագործման, պետական և գործարար հատվածի մասնակցության, գործարար կապերի ձևավորման հարցերին վերաբերյալ շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների հետ անցկացվող աշխատանքային քննարկումներին:

Պարտականությունները՝

- շահագրգիռ մարմիններին և կազմակերպություններին տրամադրել արտահանման զարգացման քաղաքականության մշակման և իրականացման, արտահանման խթանման ծրագրերի մշակման և իրականացման վերաբերյալ առաջարկությունները,
- ներկայացնել առաջարկություններ արտահանման խթանման ոլորտին առնչվող իրավական դաշտի մշակման, արտահանման խոչընդոտների վերհանման և

դրանց վերացման վերաբերյալ՝ հաշվի առնելով ոլորտային առանձնահատկությունները,

- ստուգել և վերլուծել արտաքին շուկաների ուսումնասիրման վերաբերյալ տեղեկատվական նյութերը և կազմել հաշվետություններ,
- ներկայացնել առաջարկություններ հայրենական արտադրողների համար արտաքին շուկաների հասանելիության, արտահանման խթանման, արտաքին շուկաներում հայրենական արտադրանքի և ծառայությունների մրցունակության բարձրացման վերաբերյալ,
- կազմել և ներկայացնել բեռնափոխադրումների և այլ լոգիստիկ միջոցների բարելավմանն վերաբերյալ կարծքիներ և հիմնավորումներ,
- ուսումնասիրել և վերլուծել գործարար համաժողովների, ցուցահանդեսների և տոնավաճառների ներուժի օգտագործման, պետական և գործարար հատվածի մասնակցության, գործարար կապերի ձևավորմանն աջակցելու հետ կապված տեղեկատվական նյութերը և կազմել հաշվետվություններ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ միջազգային կապերի (միջազգային հարաբերությունների) բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Ժամանակի կառավարում
2. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
3. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1.Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: